ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

18 հունվար, 2019 թվականի № 1-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ-Ի ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ, «ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊՀ-ՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի N143-Ն հրամանով հաստատված ուղեցույցների 177-րդ, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի ներքին աուդիտի կանոնակարգի 52-րդ կետերի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի ներքին աուդիտի 2019 թվականի տարեկան ծրագիրը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրինությունում 2019 թվականի հունվարի 21-ից մարտի 15-ն իրականացնել համակարգի գնահատման աուդիտ:
2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի տնտեսական տնօրինությունում 2019 թվականի մարտի 20-ից մայիսի 22-ն իրականացնել համակարգի գնահատման աուդիտ:
3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի ֆինանսական տնօրինությունում 2019 թվականի մայիսի 27-ից օգոստոսի 02-ն իրականացնել ֆինանսական աուդիտ:
4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի աշխատակազմում 2019 թվականի սեպտեմբերի 02-ից նոյեմբերի 01-ն իրականացնել համակարգի գնահատման աուդիտ:
5. «Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ում 2019 թվականի նոյեմբերի 11-ից դեկտեմբերի 13-ն իրականացնել համակարգի գնահատման աուդիտ:
6. Աուդիտորական առաջադրանքներ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

-Աշխատանքային խմբի ղեկավար՝ ներքին աուդիտի բաժնի պետ Արմեն Մոսինյան

-Աշխատանքային խմբի անդամ՝ ներքին աուդիտի բաժնի առաջատար աուդիտոր Արմինե Հակոբյան

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՋԱՂԻՆՅԱՆ

18 հունվար, 2019 թվական
ք. Երևան